

## ՇՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐԸ Սովորություններ

**Բանալի բառեր՝** Շեքսպիր, Թումանյան, գրականություն, թարգմանություն, դրամատուրգիա, թատրոն, շեքսպիրագիտություն, գրական կազեր, թումանյանագիտություն, «Համլետ», գեղարվեստ, Պետրոս Աղամյան, համաշխարհային գրականություն

**Ключевые слова:** Шекспир, литература, Туманян, литература, перевод, драматургия, театр, шекспироведение, литературные связи, Гамлет, искусство, Петрос Адамян, мировая литература.

**Keywords:** Shakespeare, literature, Toumalian, translation, drama, theatre, Shakespearean studies, Hamlet, Armenian literature, art, Petros Adamian, world literature.

**С. Ханян**

**Ованес Туманян и Уильям Шекспир**

В данной статье освещаются творческие связи прославленного Туманяна с художественным наследием великого Вильяма Шекспира.

Тщательно изучив статьи и выступления Ов. Туманяна относительно переводов произведений Шекспира на армянский язык, автор статьи на основе конкретных примеров подчеркивает, что отношения Великого Лорийца к литературному наследию бессмертного Шекспира вытекают из следующих факторов: а/перевода классических шекспировских сочинений, б/развития армянской литературы, в/совершенствования переводческого искусства, г/шлифовки армянского литературного языка.

**S. Khanyan**

**Hovhannes Toumalian and William Shakespeare**

This article highlights the creative connections of renowned Toumalian with the artistic legacy of great Shakespeare.

Careful study of Toumalian's articles and speeches concerning the Armenian translation of Shakespeare's works, the author, on the basis of concrete examples, emphasizes that the attitude of the "Great Loretsei" to the literary heritage of the immortal Shakespeare arises from the following factors: a) translation of Shakespeare's classic works, b) development of Armenian literature, c) masterliness of art translation, d) **smoothing** of the Armenian literary language.

Սույն հոդվածում լուսաբանվում են մեծանուն գրող Կ. Թումանյանի ստեղծագործական առնչությունները հանձնարեն Վիլյամ Շեքսպիրի գրական ժառանգությանը:

Հանգամանալից ուսումնասիրենով Կ. Թումանյանի հոդվածներն ու նորոյթները Շեքսպիրի նրկերի հայերեն թարգմանությունների առիթներով, հոդվածի հեղինակը կոնկրետ փաստերի հիման վրա ընդգծում է, որ Մեծ Լոռենցու վերաբերմունքը անմահ Շեքսպիրի գրական ժառանգության հանդեպ բխել է. ա) Շեքսպիրի դասական նրկերի թարգմանության, բ) հայ գրականության զարգացման, գ)թարգմանչական արվեստի կատարելագործման, դ)հայոց գրական լեզվի հրկման անհրաժեշտություններից:

Գեղարվեստական գրականության զարգացումը հազարամյակների ընթացքում տեղի է ունեցել իրար հաջորդող սերունդների կողմից ավանդույթի յուրացման և նորարարության ներդրման շնորհիվ: Դա բխել է գեղարվեստական նոր խոսք ասելու, ասել է թե՝ իրենց ապրած դարաշրջանների խոսքն ասելու միտումից: Իսկ այդ նրենույթը սերտորեն առնչված է նդել և է պատմական ընթացքի հրամայականին, պայմանավորված հասարակական լայն զանգվածների քաղաքական-հասարակական-մշակութային-հոգներանական փոփոխություններով: Այս կարևորագույն նրենույթը ականափոր շատ տեսաբաններ բացատրել են գրական ժառանգականության դիալեկտիկայով, հաստատելով, որ գրական շրջայի հաջորդական օղակների փոխհարթությունը ոչ միայն յուրացման պահանջարկն է խորհրդանշում, այլև քննադատական վերաբերմունք ու վերագնահատում և որ կարևոր է, արվեստի օրենքները յուրացնելու և ինքնատիպության հասնելու ձգտում:

Կ. Թումանյանի վերաբերմունքը Շեքսպիրի գրական ժառանգության հանդեպ միանշանակ նրենույթը: Բազմաթիվ են այն երանգները, որ նկատել է Թումանյանը Շեքսպիրի ստեղծագործության մեջ, որոնք բնութագրական և օգտակար են ոչ միայն անհատ ստեղծագործողների, այլև ազգային մշակույթի համար՝ նրենույթի ամենայայն իմաստով: Թումանյան և Շեքսպիր ծիածանը պետք է դիտարկել հենց ամենաընդարձակ ու բազմակողմանի առումներով: Կ. Թումանյանի դատենք՝ Ն. Թումանյանի

վկայությամբ, հայրը նախ պաշտում էր անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնի ստեղծագործությունը: Ապա նրա մշտական զրուցընկերը դարձավ Շեքսպիրը՝ պարզ է, ուստի նրան: Եվ բարեբախտաբար, 1890-ական թվականների սկզբներին Շեքսպիրն սկսեց խոսել հայերեն: 1894թ. հովհաննես խան Մասեհյանը անգլերենից թարգմանեց անմահ զրոյի «Համլետ» ողբերգությունը, որ իրատարակվեց Թիֆլիսի հայոց իրատարակչական ընկերության կողմից: Առիջը ստվորական չէ: Դա Թումանյանի համար գրական աննախադեպ երևոյթ հանդիսացավ և չէր կարող չարտահայտել իր վերաբերմունքը: «Համլետի» տպագրությունից նրկու տարի անց Մեծ Լոռեցին հանդեն նկավ իր բազմախորհուրդ հոդվածով՝ «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի» խորագրի տակ:

Հոդվածի հենց սկզբից Թումանյանը Շեքսպիրին ներկայացրեց որպես ազգերի զարգացման աստիճանի չափորոշիչ՝ ընդգծելով. «Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի՝ տգետ է, եթե չի հասկանում՝ կնշանակի տիհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»<sup>1</sup>:

Ազգային հպարտության ներքին ազնիվ զգացումով Թումանյանն անմիջապես նշում է, որ այդ տեսակետից հայերն առաջադիմություն են արել, որ կարելի է համարել հանկարծակի թոփք: Իսկ ինչո՞ւ հանկարծակի: Մեծ Լոռեցին հարցին պատասխանում է անմիջապես: Նա առաջ է քաշում մշակույթի մեջ սեփական յուղով չտապակվելու պահանջը: Չի կարելի միայն հիանալ «Ծուշանիկ» և «Վարդան Մամիկոնյան» ողբերգություններով այն դեպքում, եթե զոյություն ունի համաշխարհային հզոր գրականություն: Ահա այստեղ է, որ ըստ Թումանյանի հայ բնիմի վրա Շեքսպիրի հանճարը հանկարծ սկսում է խոսել Պետրոս Ադամյանի բնրանով, և հայ հանդիսատեսը դիտում է «Համլետ», «Օթելլո», «Արքա Լիբ» և մյուս ստեղծագործությունները, որոնք Մեծ Լոռեցին համարում է մարդկային իմաստության և ֆանտազիայի ամենամեծ ստեղծագործություններ, «որոնց բարձրությանը չի հասնում նոյնիսկ հանճարեն քննադատի մտքի թափի»<sup>2</sup>:

Շեքսպիրի ստեղծագործության մուտքը հայ իրականություն Թումանյանը համարում է ժամանակի խավարը զրոյի լույսի շող, այն առումով, որ այդ ժամանակներում մեր գրականությունը մի կողմից դեռևս կարգին, հեղիփած լեզու չուներ, յուրաքանչյուր հենինակ զրոյի էր առանձին լեզվով ու ոճով, որի պատճառով առաջացել էր «մի լընդիանուր ժխոր», որ անկարող էր վսեմ ներդաշնակությամբ մի բարձր միտք, մի խոր զգացմունք հայտնել, և հանկարծ աստվածային Շեքսպիրին խոսեցրին հայոց լեզվով, իրաք նուկից ուրիշ թարգմանություններից թարգմանելով «Ծելյլոկ», «Օթելլո», «Արքա Լիբ», «Համլետ» և այլն»<sup>3</sup>:

Այստեղ, սակայն, Թումանյանն ընդգծում է չափազանց կարևոր մի հիմնախնդիր, որ վերաբերում է թարգմանչական արվեստին ու մինչև օրս հոգրում է գեղագիտական աշխարհի բոլոր ներկայացուցիչներին: Ահա բնագրից թարգմանելու պահանջն է: Ահա հենց այս կարևոր պահանջն է նշում Թումանյանը, եթե զրոյի է, որ 1890-ական թվականներին հայերը Շեքսպիրի երկնրոր թարգմանում էին մի ուրիշ թարգմանությունից, այլ ոչ թե Շեքսպիրի լեզվից, այսինքն, անգլերեն բնագրից: «Ենց այդ պատճառով է, որ ինչպես նշում է Թումանյանը, «փրանց վրա կրելով ժամանակի անկարողության կնիքը, թարգման շրաբնան Շեքսպիրի և մեր մեջ, չփմացան հասարակ քննադատության դատաստանին և շմացին ընթերցողի սեղանի վրա, ինչպես վայել էր Շեքսպիրի ձեռքի զործությունից»<sup>4</sup>:

Ահա հենց նման իրավիճակում «Համլետ» ողբերգության թարգմանությունն անգլերենից հ. Թումանյանը համարում է աննախադեպ երևոյթ և գոհունակությամբ է ողջունում այն:

հ. Թումանյանը մեծարանքով է խոսում Հովհաննես խան Մասեհյանի տաղանդի մասին, որի թարգմանությանը սպասում էր սրտատրոփ:

Մեծ Լոռեցին ողջունելով տվյալ թարգմանությունը, միաժամանակ պահանջում է զգուշավոր ու պահանջկոտ վերաբերվել ոչ միայն երկի թարգմանությանը, այլև իրատարակությանը: Այսպես, Մեծ Լոռեցին զանկալի է համարում, որ «Համլետ» տպագրությունն ունենար մի առաջաբան, «որի մեջ պատմված լիներ նյութը և առաջ բնրած մեկ կամ մի բանի հայտնի քննադատի կարծիք, ինչպես առհասարակ անում են, օրինակ, ուս թարգմանիչները, մեկ էլ մութ և դժվար հասկանալի տեղերի մենակությունները, որ կարևոր են թե թարգմանչի համար, որ ցույց տա, թե այս ինչ տեղին ինչու այսպես է թարգմանել և ոչ այնպես, և թե՝ մանավանդ, ընթերցողի համար, որ կարողանար Շեքսպիրը պարզ

<sup>1</sup> Թումանյանը արվեստի մասին, ՀՍՍՌ, ԳԱ իրատ., Ե., 1969:

<sup>2</sup> Նոյյն տեղում, էջ 22:

<sup>3</sup> Նոյյն տեղում, էջ 22:

<sup>4</sup> Նոյյն տեղում, էջ 22:

հասկանալ»<sup>1</sup>: Ճիշտ է,- գրում է Թումանյանը,- Մասնիչանի գրքի Էջերում ծանոթագրություններ, բացատրություններ կան, բայց թիւ են դրանք և մի քանիսն էլ բնագրի չափ մուլթ:

Այստեղ ևս Հ. Թումանյանը մարգարեաբար նշում է, որ տվյալ դիտողությունը չի կարելի թարգմանության պակասությունը համարել, որովհետո «Ծերսպիրը մենքնություններ չի գրել, այլ ողբերգություն, թարգմանից էլ պետք է այդ ողբերգության թարգմանությունը պահանջնել և նայել, թե նա որքան հավատարիմ է մնացնել բնագրին, որքան ճիշտ է ըմբռնել և հայտնել հեղինակի միտքը»<sup>2</sup>:

Հ. Թումանյանը բնագրից թարգմանելու պահանջն ընդգծում է որպես անհրաժեշտություն: Նա իր հոդվածում մեջբերում է Հովհաննես խան Մասնիչանի արժեքավիր խոսքը. «Մինչև այժմ մեր մեջ երևեցած մեկ-երկու թարգմանությունները փոխադրված են ֆրանսերենից, այնինչ ֆրանսիական թարգմանությունները անհաջող են՝ այդ լեզվի ոճի և ոգու պատճառով: Ծերսպիրի մտածությանց հետեւ չէ կարող ամփոփվել կորոնելի լեզվի գեղածիծաղ, բայց ներ ափերի մեջ»<sup>3</sup>:

Թումանյանը կրկին գոհունակությամբ մատնանշում է Մասնիչանի կատարած գործի դժվարությունն ու անհրաժեշտությունը: Զնայած 19-րդ դարավերջի հայ գրական լեզվի ոչ բավարար մակարդակին, Մեծ Լոռեցին նշում է. «Այսուամենայնիվ, նա կատարում է իր թարգմանությունը և այն էլ պահպաննելով բնագրի ձևը, որ գործը դժվարացնում է տասնապատիկ, միաժամանակ մեծացնելով և արժանիքը: Եվ իիրավի, այս մի նշանավոր աշխատանք է, արժանի լուրջ բննադրատության, որ տարաբախտաբար, տակավին չկա»<sup>4</sup>:

«Լուրջ բննադրատություն» արտահայտության տակ Մեծ Լոռեցին նկատի ուներ կատարած գործի և վեհությունը, և այն զնահատելու պահանջը:

Հ. Թումանյանը առաջինն էր, որ ձգտեց լրացնել այդ պակասը մեր իրականության մեջ: Նա, ծանօթ լինելով Ծերսպիրի երկերի տուսերեն թարգմանություններին և տիրապետելով այդ լեզվին, Հովհաննես խան Մասնիչանի թարգմանությունը համեմատում է առաջինի հետ և գրում, որ հայերեն թարգմանության մեջ կան տեղեր, որ կասկածելի են դարձնում հայերենի հարազատությունը բնագրին: Եվ նա բերում է կոնկրետ օրինակներ տարբեր գործողություններից՝ միայն մեկ նպատակով՝ բնագրին հարազատ մնալու պահանջով, տվյալ ոնապատճեն մի այնպիսի գրողի, ինչպիսին Ծերսպիրն է:

Թումանյանի վերաբերմունքը այդ գործին անշափ լուրջ ու հետևողական է: Այսպես, խոսնելով Ծերսպիրի երկերի մեջ նշած բառախաղերի մասին և ապա նկատի առնելով Մասնիչանի ազատ վերաբերմունքն այդ երևույթին, Թումանյանը գրում է. «Մենք՝ ընթերցողներս, չենք կարող և իրավունք էլ չունենք ներողամիտ լինելու, եթե Ծերսպիրի փոխադրողը բնագրից շեղվում է, տալիս է մի համանման բան, այն էլ ոչ այնքան ընտիր: Այսպիսի դեպքում թարգմանիչը լավ կաներ, որ յուր հոյսը՝ փոխանակ ընթերցողի ներողմատության վրա դնելու՝ յուր կարողության վրա դներ»<sup>5</sup>:

Հ. Թումանյանն առաջարկում է հրատարակչություններին՝ հետևել թարգմանված գործերի լեզվական կոլլտորային: Նա գտնում է, որ հրատարակչական ընկերության անգլիացեն բանասերները նախօրոք ստուգեն, թեն ինչպիսի որակ ունեն թարգմանությունները լեզվի տեսակետից:

Հ. Թումանյանը մշտապես ուշի-ուշով հետևում էր Ծերսպիրի երկերի թարգմանություններին և անմիջապես արձագանքում: Հայտնի է, որ 1889թ. Ս. Արձրունին առաջին անգամ թարգմանել է «Համլետ» ողբերգությունը: Երկրորդ թարգմանությունը (1894) պատկանում է Հովհաննես խան Մասնիչանին: Եվ ահա 1899թ. Վիեննայի Միսիթարյան տպարանում լույս է տեսնում «Համլետը» Գարենգին Հ. Բարազյանի թարգմանությամբ:

Մեծ Լոռեցին հանդեն է զալիս նոր հոդվածով, որը տպագրվում է «Տարագի» 1900թ. մարտի 12-ի համարում: Այստեղ նա բնուում է «Համլետի» հայերեն նոր թարգմանությունը, որ կատարել է Գարենգին Հ. Բարազյանը: Մեծ բանաստեղծ հոդվածում նշում է Բարազյանի թույլ տված սխալները, աղավաղումներն ու վրիպումները: Հ. Թումանյանը հոդվածի սկզբում բերում է իր հայտնի կարծիքը թարգմանության վերաբերյալ՝ գրելով. «Թարգմանությունը պահառ տակ դրած մի վարդ է, գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջնի է, որ

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 24:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 27:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 28:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 28:

<sup>5</sup> Նոյն տեղում, էջ 75:

նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, եթե թարգմանվում է այսպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տնիր: Այսօրինակ գործերից է Շեքսպիրի «Համլետը», որ անզերենից թարգմանել է պ. Բաբաջան»<sup>1</sup>:

Հ. Թումանյանը մատնացույց է անում Բաբաջանի հավակնությունները, այն առումով, որ նա «Համլետի» թարգմանության առաջարանում խուն է դրամայի առաջին և երկրորդ թարգմանությունների թերությունների մասին: Մեծ Լոռեցին չի ընդունում Բաբաջանի այն կարծիքը, թե իբր հայոց թերթերը նշել են Հ. Խան Մասենյանի ակնառու թերությունները: Մեծ Լոռեցին ընդգծում է, որ ինքը, օրինակ, նման արտասոց թերություններ չի նկատել Մասենյանի թարգմանության մեջ: Ապա անմահ պուտը բերում է հենց Բաբաջանի թարգմանության մեջ եղած անթիվ թերությունները: Եվ ոչ միայն լեզվական աղավաղումներն է նշում, այլև մատնացույց է անում դրամայի առանձին հատվածների բացթողումներ: Դրանով հանդերձ, Թումանյանը նշում է, որ ինքը Բաբաջանի գործն անտեսելու և ժխտելու նպատակ չունի, որ իրեն հոգում է Շեքսպիրի որակյալ թարգմանության լունդիրը:

Ընդհանրապես, Հ. Թումանյանը թարգմանությունը համարել է արվեստ: Թարգմանության բնագավառը գլուխ պահելու տեղ չէ: Այսպես, իր «Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում» խիստ արժեքավոր հոդվածում, որ գրվել է Կովկասի Հայոց հրատարակչական լընկերության աղթիվ, գրում է. «Էստեղ ինչ է պետք: Ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն: Ես երեք պայմանը պետք է ունենանք»<sup>2</sup>:

Եվ որպեսի իր խոսք չինչի միայն որպես քարոզ, Թումանյանը խորհուրդ է տալիս անդրադառնալ անցած տարիներին թարգմանած գործերին, տնտեղել, նշել բացթողումները՝ դաս առնելու նպատակով: Եվ նա նկատի է առնում Հրատարակչական ընկերության հրատարակություններից երկուսը՝ Շեքսպիրի «Համլետը» անզերենից Հովհաննես Խան Մասենյանի և «Մակբեթը» գերմաներենից Ստեփան Մալխասյանի թարգմանությամբ: Մեծ Լոռեցին միաժամանակ ավելացնում է. «Ես ես գործերն եմ առնում առանձին սիրով, նախ, որ Շեքսպիրն իմ շատ սիրած գրողն է, երկրորդ՝ թարգմանչները քաջ հայացետ են ու բարեխիդ մարդիկ, երրորդ, որ նրանց բնագավառը գործը Հրատարակչական ընկերությունը կատարել է առանձին զգուշակությամբ ու շրբորդ՝ տպագրությունը արել է առանձին խնամքով»<sup>3</sup>:

Հ. Թումանյանը մեծագույն հարգանքով է խոսում Հովհաննես Խան Մասենյանի թարգմանչական արվեստի մասին, նշելով, որ նրա թարգմանության առանձին կտորներ ավելի բարձր են, քան ուսական թարգմանությունները: Եվ բնրում է Լանրատի խրատը իր քրոջը՝ Օֆելյային, Պոլոնիուսի խոսքը՝ Համլետի սիրությունների մասին, ապա Վեհափառ հոր ուրվականի առջև զարհուրած դժբախտ Համլետի աղաղակը և հիազմունքով ընդգծում. «Տեսնո՞ւմ եք ինչ արժանավայել ճոխությամբ խոսում է հայոց լեզուն Դանիայի արքայազնի բնրանում, ինչպես ուժով կարողանում է տալ Շեքսպիր կոչված տիտանի երկար շունչն ու մոռնչը»<sup>4</sup>:

Հարգանքով խոսելով Ստեփան Մալխասյանի մասին, նրան համարելով մեր շատ սակավաթիվ հայկաբաններից մեկը, Հ. Թումանյանը, այնուամենայնիվ, խորհուրդ է տալիս գրական ասպարեզում լինել ավելի ևս խստապահանջ, որովհետև թարգմանվում է Շեքսպիր, որ «Գործ ունենք Շեքսպիրի հետ, մի գրողի հետ, որի ամեն մի խոսքը շատ է հաստատ և իր իմաստն ունի»<sup>5</sup>:

1910 թվականին Թիֆլիսում համարյա միաժամանակ հանդես են եկել հայկական և տուսական թատերախմբերը՝ Շեքսպիրի «Համլետի» բնմադրությամբ: Տեսնելով այդ ներկայացումները, Հ. Թումանյանը հրատարակորեն հանդես է եկել այդ բնմադրությունների աղթիվ՝ հայտնելով իր զայրույթը դրանց հանդեմ: Հոդվածը տպագրվել է «Հորիզոն» թերթի 1900 թվականի ապրիլի 12-ի համարում:

Մեծ Լոռեցին հոդվածը վերնագրել է դիպուկ ու բնութագրական այդ զածրորակ բնմադրությունների մասին. «Համլետի» չարչարանքի շաբաթը Թիֆլիսում»: Շեքսպիրի «Համլետը» հայերեն ներկայացրել է Ամո Խարազյանը, իսկ ուսերեն՝ Դայլսկին:

<sup>1</sup> Սույն տեղորում, էջ 86:

<sup>2</sup> Սույն տեղորում, էջ 87:

<sup>3</sup> Սույն տեղորում, էջ 90:

<sup>4</sup> Սույն տեղորում, էջ 93:

<sup>5</sup> Սույն տեղորում, էջ 101:

Թումանյանը դժգոհելով այդ երկու ներկայացումներից, ընդգծում է բոլոր ժամանակների համար կարևոր մի խորհուրդ՝ թատերական կողմետիվը պետք է խստապահանջ լինի իր արվեստի հանդեպ, այլապես նա չի կարող պահանջվող մակարդակով ներկայացնել որևէ թատրոնի, առանձնապես այնպիսին, ինչպիսին Շեքսպիրի նրկերն են, տվյալ դեպքում՝ «Համլետ»:

1916թ. «Հորիզոն» թերթի 38-րդ համարում տպագրվում է Վ. Թումանյանի «Համաշխարհային գրական տոնը» հոդվածը՝ նվիրված Շեքսպիրի և Սերվանտեսի ծննդյան 300-ամյակին: Մեծ Լոռեցին այս հոդվածում նշում է Առաջին համաշխարհային աղետայի պատերազմի ընթացքը և միաժամանակ շեշտում, որ գրական այս տոնը պետք է նշի ամբողջ կուլտուրական աշխարհը: Նա մարզարեաբար գրում է. «Պետք է տոնեն և պատերազմից հետու կանգնած ժողովուրդներն իրենց խաղաղ քաղաքներում, և կովող ազգերն իրենց խրամատներում, և անգլիացին, որ Շեքսպիր է ծննդ, և զերմանացին, որ Շեքսպիր է սիրել ու որդեգրել, և ռուս, և ֆրանսիացին, և խոլազին, և ավստրիունգարացին, ամենը, ամենքը, մինչև ուր հասել է Դոնքիշոտի ազնիվ խելառության համբավը, մինչև ուր հասնում է Շեքսպիրի աստվածային բանականությունը, որ մարդկային հոգին ազատագրելով ամեն տեսակ բռնակալություններից՝ միայն ստեղծագործական ոգու իշխանությանն է ենթարկում»<sup>1</sup>:

Թումանյանը պատերազմի պատճառով սպավոր դարձած մարդկության համար Շեքսպիրյան տոնը համարում է համաշխարհային միության տոն, որովհետև ազգերը միայն ավերիչ թնդանոթներ չեն ուղարկում իրար, այլև նվիրում են ստեղծագործող հանճարներ: Հենց ստեղծագործող այս հանճարներն են, որ փոխադարձաբար իրար տալիս են ամենաբարձրը, ինչ որ մարդը կարող է նրազել, նրանք տենչում են այնպիսի կապեր, որոնք միշտ մնում են սրբազն, ամուր ու անսասան՝ նոյնիսկ ամենավտանգավոր պահերին: Թումանյանը նշում է, որ Սերվանտեսի և Շեքսպիրի շնորհիվ «նոր գրականությունը դարձավ էն թարմ, առողջ օդը, որ Վերածնության շրջանից սկսած, շնչում է մարդկությունը և միշտ նոր ուժ առնելով, իրար ետևից նորանոր հորիզոններ է նվաճում՝ անդադար ընդարձակելով իր կյանքի ու աշխարհայացքի սահմանները»<sup>2</sup>:

Վ. Թումանյանը Շեքսպիրի ստեղծագործության հետ կապում է նաև հայոց դերասանական արվեստի զարգացումը, ուստի այդ ելույթում խորհուրդ է տալիս, որպեսզի Շեքսպիրի մահվան 300-ամյակին միացնեն Համլետի հանճարներ մարմնավորող Պետրոս Աղամյանի մահվան քանինգամյակը:

Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակի կապակցությամբ 1916թ. ապրիլի 28-ին Հայոց գրողների ընկերության նախաձեռնությամբ Թիֆլիսի ժողովարանում կազմակերպվել է հանդիսավոր երեկոյթ: «Շեքսպիր և Սերվանտես» բացման ճառու հանդես է եկել Վ. Թումանյանը: Ելույթներ են ունեցել Ա. Շիրվանզադեն, Վ. Թոթովինցը, Ն. Աղբալյանը և ուրիշներ: Ճառ տպագրվել է «Հորիզոն» թերթի 1916թ. մայիսի 1-ի համարում: Այստեղ ևս Մեծ Լոռեցին իր հակիրճ խորքը ցուցաբերել է ազգային հանճարի իր կարողությունը, արժանիքուն ներկայացնելով երկու մեծերի տեղն ու դերը համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Նա 1603 թվականը համարում է նշանավոր թիվ, որովհետև այդ թվականին է, որ լուս են տեսել Անգլիայում Շեքսպիրի «Համլետը», Խապանիայում Սերվանտեսի «Դոն Ռիխտոր»: Մտածող ու տառապող նոր ինտելիգենտի ողբերգությունը և համաշխարհային ազնիվ խելանիթ արկածների պատմությունը<sup>3</sup>:

Թումանյանը ճառում բնութագրելով երկու մեծերին, նշել է, թե նիշպես նրանց ստեղծած թե՛ Համլետը, թե՛ Դոն Ռիխտորը գիտեն ու տեսնում են, որ աշխարհը դրս է եկել իր ճանապարհից, և մարդը տառապում է, երկուսն էլ զգում են, որ իրենց է վիճակվել նորից աշխարհն ուղիղ ճամփի վրա դնելու մեծ գործը: Սակայն տարբեր է նրանց վերաբերմունքը աշխարհի հանդեպ: «Նրանցից մենքը՝ Համլետը, գրում է Թումանյանը, դժգոհ է, անիծում է իր ճակատագիրը, թե՛ ինչու իրեն չի վիճակվել եղ ծանր գործը ու դժբախտ է իր արքայական զգեստի ու պալատի մեջ, մինչդեռ մյուսը՝ Դոն Ռիխտորը, զոհ է իր բարձր առարձնությունից ու երջանիկ է առքատ Գիտագոյի զնցուիներով ու իր ունեցած յշշվառ միջոցներով»<sup>4</sup>:

Մեծ Լոռեցին զուգահեռներով ցոյց է տալիս Շեքսպիրի և Սերվանտեսի ճակատագրերի պատմական երանգները, նշելով. «Նոյնքան նշանավոր է 1616 թվականը և հատկապես էղ թվականի ապրիլի 23-ը, երբ միևնույն օրը վախճանվեցին՝ Անգլիայում Շեքսպիրը, Խապանիայում Սերվանտեսը և

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 113:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 114-115:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 115-116:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 116:

Էսպեսով համաշխարհային գրականության հորիզոնի վրա միաժամանակ մայր մտան Երկու հսկայական արեգակ»<sup>1</sup>:

Հ. Թումանյանը ամեն դեպքում Երկու հանճարներին գնահատում է բատ էության: Նրա համար Ծերսպիրը անգույզական մնջություն է: Թումանյանը նշում է. «Սակայն գերազանց է բրիտանական հանճարի փայլը, որ իր ճաճանչները մի կողմից զարկում է մինչև Էսքիլսի ու Սոֆոկլեսի ժամանակները, մյուս կողմից՝ դեպի գրականության անդաստան: Եվ ամեն մի գրող, ինչ աշխարհում էլ ասպարեզ իջնի, տեսնում է իր ուղին արդեն լուսավորված նրա շղթերով, և գրեթե անխտիր շատ քիչ բացառությամբ ամենքն էլ խոնարհվել են նրա հանճարի առջև»<sup>2</sup>:

Թումանյանն իր գնահատականը հաստատում է Մեծ Գյորենի թևավոր մտքով՝ ասված Ծերսպիրի մասին. «Ահով ու դողով եմ մոտենում գրական էն հսկա կադնուն, որի մոտ միանում են ու որից բաժանվում են գրականության բոլոր ճաճապարհները»: Որպես հայերի կողմից նկատելի հետաքրքրության վկայություն՝ Ծերսպիրի հանդեպ Մեծ Լոռեցին ավելացնում է. «Մենք՝ հայերս էլ, որ երբնք խորթ չենք նոյն գրականության ոչ մի ճաճապարհին և վահուց զերմ սիրել ենք Ծերսպիրը՝ նրա մահվան երերիարյուրամյակի օրը արդեն ունենք մեր արժանավայել ներկայացուցությունը, և ինձ էնպես է թվում, թե Էսօր Ծերսպիրի գերեզմանի վրա արդեն կանգնած է հայկական Համլետը, հոգիացած Ադամյանը, իբրև հայության ներկայացուցիչ, և դժվար թե ուրիշ որևէ ազգ էլ կարողանա ավելի զեղեցիկ մի ներկայացուցություն ունենալ Էսօրվան օրը՝ Ստրադֆորդում իր հարգանքն ու մնջարանքը ցույց տալու համար»<sup>3</sup>:

Հ. Թումանյանի համար Ծերսպիրը մի մնջություն է, որը նպաստել է ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև թատերական արվեստի աննախադենականությանը: Այս առումով ուշագրավ է նրա «Ադամյանի օրերից» հուշագրությունը, որ տպագրվել է «Հորիզոն» թերթի 1916 թվականի 122 և 124 համարներում: 1916թ. հունիսի 7-ին լրացնել էր հայ մնջանուն արտիստ Պետրոս Ադամյանի 125-ամյակը: Այդ աղթիվ Թումանյանը շարադրել է իր հիշողությունները տաղանդավոր արտիստի հետ ունեցած հանդիպումների մասին, վերապերելով նրա խաղի հմայքը:

Թումանյանը նաև վերիշում է հայ մշակութային կյանքի նկատմամբ և ապա նշում, որ երեխաներն արդեն կրկնում էին շերսպիրյան տողերը. «Օֆելիա՝, մտի՛ր կուսանց», «Դեզրենմոնա՝, ո՞ւր է թաշկինակը...»:

Կարելի է ասել, որ իր աստղագործական ամբողջ կյանքում Թումանյանն օգագու է Ծերսպիրի ներկայությունը՝ որպես անմիջակից գեղագիտ: Այդ են վկայում նրա «Ծերսպիրի մասին» ֆրազմենտները, որ հավանորեն գրվել են 1916թ., Ծերսպիրի մահվան 300-ամյակի աղթիվ: Ֆրազմենտների այդ շարքը ժամանակի մամուլում չի տպագրվել: Առաջին ֆրազմենտը տպագրվել է «Գրական թերթի» 1956թ. 16-րդ համարում, իսկ ամբողջությամբ՝ Թումանյանի ներկերի ժողովածուի 6-րդ հատորում, 1959 թվականին:

Հ. Թումանյանի հոդվածներն ու ասույթները Ծերսպիրի ստեղծագործության և նրա կերտած կերպարների մասին ոչ միայն թումանյանագիտության պայծառ էջնրից են, այլև հավերժական ներդրումներ են հայոց շերսպիրագիտության մեջ, որ պատիվ կարող են բերել յուրաքանչյուր քաղաքակիրթ ժղողովրդի: Եվ ոչ միայն այդ: Դրանք ուսանելի դասեր են ժամանակակից և ապագա ստեղծագործող սերունդների համար, որովհետև առանց անցյալի հարուստ գրական ժառանգության յուրացման, հնարավոր չեն ասել ու հաստատել նորը: Դա ժառանգագիտության, արվեստի հարագիտության զարգացման ու հաստատման օրենքն է, ավանդույթի և նորարարության չլունացող ծիածանը:

## Տեղեկություններ հեղինակի մասին

**Սովորատ Խանյան –** թ.գ.դ., պրոֆեսոր, հայ գրականության և լրագրության ամբիոն

E-mail: mexak05@mail.ru

Հոդվածը տպագրության է ներաշխավորել խմբագրական կողնգիայի անդամ, թ.գ.դ. Ս. Խանյանը:

<sup>1</sup> Սովոր տեղում, էջ 116:

<sup>2</sup> Սովոր տեղում, էջ 116:

<sup>3</sup> Սովոր տեղում, էջ 117: